ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» հոկտեմբերի 2025 թ. N 169-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «ՀԵՐՄԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի դիմումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «ՀԵՐՄԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-003022) և «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» (ՔՊՆ-003022-04) ենթատեսակի ներդիրի գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10/8/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ